ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՋԱՓՆՅԱԿ-2 ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԱՋԱՓՆՅԱԿ, ՀԱԼԱԲՅԱՆ Փ., շենք 41Ա, 10-ՐԴ ՀԱՐԿ)

ՈՐՈՇՈՒՄ
Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին

ԵԴ2/1781/02/24 ք. Երևան
25 Մարտի 2024թ

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Թ. Ղուկասյանս (այսուհետ՝ Դատարան), ծանոթանալով «ԱՍ-777» ՍՊ ընկերության հայցադիմումին ընդդեմ «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ի՝ «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ի կարիքների համար «Արմավիր ՔԿՀ» տարածքում գտնվող բժշկական մասի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՔԲԿ-ԲՄԱԾՁԲ-24/9» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 3-րդ արձանագրության 1.1 կետով «ԱՍ-777» ՍՊԸ-ի հայտը մերժելու և «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ի կարիքների համար «Արմավիր ՔԿՀ» տարածքում գտնվող բժշկական մասի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՔԲԿ-ԲՄԱԾՁԲ-24/9» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 3-րդ արձանագրության 2.3- րդ կետով «Արմեն-Շին» ՍՊԸ և «Արամե» ՍՊԸ /կոնսորցիում/-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումներն անվավեր ճանաչելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑԻ

«ԱՍ-777» ՍՊ ընկերությունը 13.03.2024 թվականին էլեկտրոնային համակարգի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան:

Հայցադիմումը դատավոր Թ. Ղուկասյանիս է մակագրվել 13.03.2024 թվականին:

Դատարանի 18.03.2024 թվականի որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է:
«ԱՍ-777» ՍՊ ընկերությունը Դատարանի կողմից սահմանված եռօրյա ժամկետում՝ 19.03.2024 թվականին կրկին հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան:
Կրկին ներկայացված հայցադիմումը Համակարգում հասանելի է դարձել 21.03.2024 թվականին:
ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.5-րդ հոդվածի համաձայն՝ «1. Դատարանը սույն գլխով սահմանված կարգով քննում և լուծում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների բողոքարկման հետ կապված վեճերը:
2. Գնումների հետ կապված վեճերը քննվում և լուծվում են հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո՝ երեսուն օրվա ընթացքում: Դատարանի պատճառաբանված որոշմամբ սույն մասով նախատեսված ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ՝ մինչև տասն օրացուցային օրով»:
Տվյալ դեպքում ներկայացված հայցապահանջով հայցվորը վիճարկում է պատվիրատու պատասխանողի գործողությունները՝ ուղղված թիվ «ՔԲԿ-ԲՄԱՇՁԲ-24/9» ծածկագրով գնման ընթացակարգով գնահատող հանձնաժողովի թիվ 3-րդ արձանագրության 1.1 կետով «ԱՍ-777» ՍՊԸ-ի հայտը մերժելուն և «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ–ի կարիքների համար «Արմավիր ՔԿՀ» տարածքում գտնվող բժշկական մասի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՔԲԿ-ԲՄԱՇՁԲ-24/9» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 3-րդ արձանագրության 2.3- րդ կետով «Արմեն-Շին» ՍՊԸ և «Արամե» ՍՊԸ /կոնսորցիում/-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումներն անվավեր ճանաչելուն, ուստիև հայցը ենթակա է քննության ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27.2-րդ գլխի կանոններով:
Հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքեր չկան:
Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 120-122-րդ, 199-րդ, 200-րդ հոդվածներով, ինչպես նաև 27.2-րդ գլխի կանոններով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. «ԱՍ-777» ՍՊ ընկերության հայցադիմումն ընդդեմ «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ի՝ «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ–ի կարիքների համար «Արմավիր ՔԿՀ» տարածքում գտնվող բժշկական մասի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՔԲԿ-ԲՄԱՇՁԲ-24/9» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 3-րդ արձանագրության 1.1 կետով «ԱՍ-777» ՍՊԸ-ի հայտը մերժելու և «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ–ի կարիքների համար «Արմավիր ՔԿՀ» տարածքում գտնվող բժշկական մասի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՔԲԿ-ԲՄԱՇՁԲ-24/9» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 3-րդ արձանագրության 2.3- րդ կետով «Արմեն-Շին» ՍՊԸ և «Արամե» ՍՊԸ /կոնսորցիում/-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումներն անվավեր ճանաչելու պահանջի մասին, ընդունել վարույթ:

2. Գործի քննությունն իրականացնել գրավոր ընթացակարգով՝ դատական ակտի

հրապարակման օր սահմանելով 07 մայիսի 2024 թվականին՝ դատական իշխանության պաշտոնական էլեկտրոնային կայքի (datalex.am) միջոցով:

Որոշումը եռօրյա ժամկետում ուղարկել գործին մասնակցող անձանց:

Որոշումն անհապաղ ուղարկել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված լիազորված մարմնի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին՝ secretariat@minfin.am:

Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից:

Դատավոր՝ Digitally signed by GHUKASYAN TATUL 3907860608 **Թաթուլ Ղուկասյան**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am